ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ ԵՎ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Հայոց բանակի անսասանությունն ու ամրությունը կախված է ոչ միայն նրա մարտունակությունից, զենքերի ու զինվորների մեծաքվությունից, այլ նաև նրանում տիրող ոգուց ու նկարագրից: Այն բարձր պահելու գործը գրեթե ամենուր կատարում են տվյալ ազգի հոգևոր սպասավորները:

Անկախության վերականգնմամբ հիմնված հայոց բանակում ՀՀ Պաշտպանության նախարարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միացյալ ջանքերով, արդեն շուրջ կես տարի է, ինչ հայ զինվորի բարոյա-հոգեբանական դիմագծի կերտման գործում վերստին իր կարևոր դերն է ստանձնել նաև հայ հոգևորականը:

Այսօր այս գործը ղեկավարում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանը՝ ստանձնելով ՀՀ բանակի հոգևոր խորհրդականի դժվարին ու պատասխանատու պարտականությունը: Շուրջ կես տարվա գործունեությունը, թեև ընդգրկելով կարճ ժամանակահատված, այնուամենայնիվ տվել է իր ցանկալի արդյունքը: Զորամասերից մեծ մասն այսօր ունի իր հոգևոր խորհրդականը: Խորհրդականներն իրենց զրույցներով, հորդորներով, հոգևոր գիտելիքների ուսուցմամբ փորձում են կերտել Հայրենիքի պաշտպանի այսօրվա հոգևոր նկարագիրը: Յուրաքանչյուր զորամաս ունի իր նորաստեղծ փոքրիկ գրադարանը, ուր տեղ են գտել և գտնելու են բազմաթիվ հոգևոր հրատարակություններ: Զորամասերում հաճախակի են կատարվում նաև ընդհանրական Մկրտություններ:

Հրամանատարության ջանքերով դեկտեմբերի 23-ին հերթական ընդհանրական Սուրբ Մկրտությունն էր կազմակերպվել նաև Էջմիածնի զորամասերից մեկում: Օրը կրկնակի հանդիսավոր էր ողջ զորամասի, ներկա ծնողների ու հարազատների, ինչպես նաև հյուրերի համար, քանի որ երդման արարողությունը զուգորդվելու էր Ս. Մկրտության խորհրդակատարմամբ: Մկրտության Սուրբ Խորհուրդը կատարեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

14 նորակոչիկներ նախ ծնողների, իրենց ավագ ընկերների և մեծաթիվ հյուրերի ներկայությամբ հանդիսավոր կերպով երդվեցին պատվով ծառայել Հայաստանի Հանրապետությանը, հավատարիմ մնալ իրենց առաջադրված պատվիրաններին, իսկ թե հարկ լինի՝ հանուն Հայրենիքի զոհել անգամ սեփական կյանքը:

Երդման հանդիսավոր պահից հետո սկսվեց Ս. Մկրտության արարողությունը: Խորհրդանշական էր այս երկու կարևոր արարողությունների համատեղ իրականացումը: Երդման արարողությամբ նորակոչիկները դարձան հայոց բանակի զինվորները, իսկ Ս. Մկրտությամբ՝ մեր զինվորյալ Եկեղեցու լիարժեք անդամները: Մկրտվողներին կնքահայր դարձավ զորամասի հրամանատարը:

Ս. Սկրտությունից հետո, դիմելով ներկաներին, խորհրդակատար Հայր Սուրբն առանձնակի նշեց. «*Կնքահոր ու սանիկների հոգևոր կապը պետք է բարձրացնի և նոր աստիճանի վրա դնի հրամանատարի ու զինվորների փոխհարաբերությունները: Այն պետք է առաջինին մղի հայրական խնամքի, իսկ երկրորդներին՝ որդիական խոնարհության: Սկրտությամբ բոլորդ ծնվեցիք մեկ՝ Սուրբ Ավազանից, որով ձեր ընկերական հարաբերությունները ևս պիտի փոխվեն ու դառնան եղբայրական:*

Եկեղեցին մեկ մարմին է, իսկ մենք՝ նրա անդամները: Մեկի թուլության պարագային ոչ թե պիտի հալածենք, անարգենք ու արհամարհենք նրան, այլ, մարմնի մասերի օրինակով, խնամենք վիրավորին, տկարին և հոգանք նրա կարիքները: Որքան ջերմ ու մտերիմ լինեն ձեր փոխհարաբերությունները, ըստ այդմ, նույնքան զորեղ կլինեն նախ՝ ձեր զորամասը, ապա՝ Հայոց բանակը և ապա՝ մեր ազատ ու վերանկախացյալ Հայրենիքը:

Տա Աստված, որ ձեր հրամանատարության այս ոգեկերպիչ նախաձեռնությունը միայն գեղեցիկ արարողություն չնկատվի, այլ՝ արմատանա, անցնի հոգուց հոգի և յուրաքանչյուր զինվոր այս կերպ առավել քաջ գիտակցի իր պարտականության վեհությունը...»:

Աղոթենք ու հուսանք, որ այս գեղեցիկ խորհրդակատարությունն իր տեսակի մեջ եզակի չի մնա, այլ, ընդհակառակը, զորամասերում խոր արմատներ կնետի, կդառնա ավանդական: Սակայն տա Աստված, որ այսուհետ ոչ մի նորակոչիկ առանց մկրտվելու չզորակոչվի բանակ:

ՎԱՀԵ ԴՊԻՐ ԲԵԳՈՅԱՆ